ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մարգահովիտ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Մարգահովիտ	Ավագանու արտահերթ նիստ	10.09.2021թ.	15:00	**Մարգահովիտի** համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարգահովիտ, 2 փողոց 23)

ՆԱԽԱԳԻԾ 40-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ. սեպտեմբերիի 10-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ.-ի սեպտեմբերի 10-ի արտահերթ նիստի.

1. Մարգահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 07 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի 2021թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Սոց. օգնություններ տրամադրելու մասին:
4. Համայնքային որոշ փողոցների հասցեները փոփոխելու մասին:
5. «Մարգահովիտի օր» տոնակատարության համար գումար հատկացնելու մասին:
6. Մարգահովիտ համայնքի բնակչության անհամաձայնությունը Մարգահովիտ համայնքը Փամբակ խոշորացված փնջին՝ Փամբակ կենտրոնով, միացնելու մասին:
7. Մշակույթի տանից վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 41-Ն

ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ ***Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.***

Մարգահովիտ համայնքի 2021թ-ի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

Ընդամենը համայնքի բյուջեի մուտքեր - 189494,5 /մեկ հարյուր ութսունինը միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

ա) Ընդամենը վարչական բյուջեի մուտքեր - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- վարչական բյուջեի եկամուտներ - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

բ) Ընդամենը ֆոնդային բյուջեի մուտքեր - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

- ֆոնդային բյուջեի եկամուտներ - 0,0 /զրո/ ՀՀ դրամ

- տարեսկզբի ազատ մնացորդ - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր - 189494,5 /մեկ հարյուր ութսունինը միլիոն չորս հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ

ա) Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր - 131390,7 /մեկ հարյուր երեսունմեկ միլիոն երեք հարյուր իննսուն հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ

բ) Ընդամենը ֆոնդային բյուջեի ծախսեր - 58103,8 /հիսունութ միլիոն մեկ հարյուր երեք հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

3. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելորդը կամ դիֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 42-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ ***Մարգահովիտ համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝***

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու

2021 թվականի սեպտեմբերի 10-ի N 42-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Անտինյան Միեր Վաչագանի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/,
2. Զուլալյան Վալոդյա Մամիկոնի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն/
3. Սարդարյան Հովհաննես Սամվելի - քառասունհինգ հազար դրամ/ սոց. օգնություն/
4. Խառատյան Անահիտ Արմենի - երեսուն հազար դրամ /սոց. օգնություն

Ընդամենը – 135.000 հարյուր երեսուն հինգ հազար/ դրամ:

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

(ստորագրություն)

ՆԱԽԱԳԻԾ 43-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՐՈՇ ՓՈՂՈՑՆԵՐԻ
ՀԱՍՑԵՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-ռդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 29.12.2005թ. թիվ 2387-Ն կառավարության որոշմամբ.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Փոփոխել Մարգահովիտ համայնքի որոշ փողոցների հասցեները.

(ըստ հավելվածի)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու

2021 թվականի սեպտեմբերի 10-ի N 43-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՍՑԵՆԵՐԻ

փողոց 7-1 → փողոց 7, նրբանցք 1

փողոց 8-2 → փողոց 8, նրբանցք 2

փողոց 18-1 → փողոց 4, փակուղի 7

փողոց 18-2 → փողոց 4, փակուղի 9

փողոց 18-3 → փողոց 4, նրբանցք 1, փկղ. 1

փողոց 18-4 → փողոց 4, նրբանցք 1

փողոց 20-1 → փողոց 18, նրբանցք 1

փողոց 20-2 → փողոց 18,նրբանցք 2

փողոց 20-3 → փողոց 18, նրբանցք 3

փողոց 21-2 → փողոց 2, փկղ. 8

փողոց 21-4 → փողոց 2, փկղ. 10

փողոց 21-6 → փողոց 2, փկղ. 12

փողոց 21-8 → փողոց 2, փկղ. 14

փողոց 21-1 → փողոց 21, նրբանցք 1

փողոց 21-3 → փողոց 14,նրբանցք 2

փողոց 21-5 → փողոց 14, նրբանցք 4

փողոց 21-7 → փողոց 14, նրբանցք 6 (մի հատված)

փողոց 21-9 → փողոց 14, նրբանցք 8

փողոց 21-5 → փողոց 14, նրբանցք 1

փողոց 21-7 → փողոց 14, նրբանցք 3 (մի հատված)

փողոց 21-9 → փողոց 14, նրբանցք 5

փողոց 21-10 → փողոց 14, նրբանցք 7

փողոց 21-7 → փողոց 15, նրբանցք 2 (մի հատված)

փողոց 24-1 → փողոց 25

փողոց 24-3 → փողոց 1,նրբանցք 2

փողոց 24-2 → փողոց 26

փողոց 2-2 → փողոց 26, փկղ. 2

ՆԱԽԱԳԻԾ 44-Ա

«ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՕՐ» ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հատկացնել գումար «Մարգահովիտ օր» տոնակատարության կազմակերպման և իրականացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 45-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՄԲԱԿ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՓՆՋԻՆ՝ ՓԱՄԲԱԿ ԿԵՆՏՐՈՆՈՎ, ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Քննարկել ներկայացված հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 46-Ա

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԻՑ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 29.12.2005թ. թիվ 2387-Ն կառավարության որոշմամբ.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Մշակույթի տանից վարձակալությամբ տարածք տրամադրել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ